ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-Ը ՄԱՐՏԻ 2020 թվականի N 83 Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ 20/03/2020 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48-րդ, 76-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 19/12/2019թ. N 82Ա որոշումը , Եղեգիս համայնքի մրցութային հանձնաժողովի 20/03/2020թ. թիվ 1 արձանագրությունը

որոշում եմ՝

1.Հաստատել 2020 թվականի մարտի 20-ին կայացած համայնքային սեփականություն համարվող, Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքի /կադաստրային ծածկագիր՝ 10-041-0201- , մակերեսը՝ 1,75հա/ վարձակալության իրավունքի տրամադրման մրցույթի հետևյալ արդյունքները՝

· Մրցույթում հաղթող ճանաչել Շատին համայնքի բնակիչ *Ավետիք Սարիբեկի Հովակիմյանին*,
· Վարձակալության իրավունքի ժամկետը՝ հինգ տարի,
· Վարձակալության իրավունքի տրամադրման տարեկան վարձավճարի չափը՝ 11 550 (տասնմեկ հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ,
· Վարձակալության իրավունքի տրամադրման նպատակը՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար:

2.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի տարածքում վարձակալի կողմից կատարված անբաժանելի ներդրումները և բարելավումները համարվում են համայնքային սեփականությունը և հողամասի տարածքի մաքրման, կանաչապատման և բարեկարգման պարտավորությունը կրում է վարձակալը:
3.Ա. Հովակիմյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասերի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիր:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-Ը ՄԱՐՏԻ 2020 թվականի N 84 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 20-ը մարտի 2020թ. թիվ 1,2 արձանագրությունները՝ հողամասի՝ աճուրդով վաճառքի արդյունքների մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 70-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողատեսքը վաճառել Արտաբույնք բնակավայրի բնակիչ Մուրադ Գևորգի Հովսեփյանին՝

- բնակավայրերի նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատեսք, ծածկագիր՝ 10-010-0014-0032, 0,01 հա մակերեսով՝ 23 400 /քսաներեք հազար չորս հարյուր / դրամ:

2.Հողամասը օտարելու համար օրենքով սահմանված ժամկետում և կարգով կնքել առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-Ը ՄԱՐՏԻ 2020 թվականի N 85 Ա

ԳՈՂԹԱՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ,ՍԱՀԱԿ ՌԱԶՄԻԿԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը

որոշում եմ՝

1.Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրում գտնվող Սահակ Ռազմիկի Ոսկանյանի սեփական տնամերձ հողամասին և բնակելի տանը /կադաստրային ծածկագիր՝ 10-018-003-006, տարածքը՝ 0,125հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Գողթանիկ բնակավայր, փողոց 4, փկղ. 2, տուն 2 հասցեն,

2.Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրում գտնվող Սահակ Ռազմիկի Ոսկանյանի սեփական տնամերձ հողամասին /կադաստրային ծածկագիր՝ 10-018-003-008, տարածքը՝ 0,19հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Գողթանիկ բնակավայր, փողոց 4, փկղ. 2, թիվ 1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ